

## ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոսի

Սաթենիկ Սլավիկի Միսակյանի «Սովորողների Էկոլոգիական  
աշխարհայացքի ձևավորման տեսագործնական հիմունքները»

խորագրով ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցմանը ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Սաթենիկ Սլավիկի Միսակյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է մանկավարժության տեսության և պատմության արդի հիմնահարցերից մեկին, այն է՝ սովորողների Էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսագործնական հիմունքներին:

Թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում: Ավելին՝ ժամանակակից իրականությունը ընդգծում է Էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման կարևորությունը: Գլոբալ Էկոլոգիական ճգնաժամերն Էկոլոգիական դաստիարակությունը դարձնում են ոչ միայն կրթական խնդիր, այլև՝ կոմպետենտ և պատասխանատու քաղաքացու ձևավորման պայման: Այս իմաստով Էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումը վերաբերում է ոչ միայն բնությանը, այլ նաև մտածողության տեսակին՝ համակարգային, կանխատեսողական և էթիկապես կողմնորոշված:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից, ներառում է 1 գծապատկեր, 8 աղյուսակ, 7 տրամագիր: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 150 էջ:

Հետազոտության կառուցվածքը տրամաբանական է և հիմնավորված: Ներածությունում ներկայացված է ատենախոսության արդիականությունը, հստակ ձևակերպված են օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, առաջադրված խնդիրները, սահմանված են հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, առկա են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Նպատակը ձևակերպված է հստակ և համապատասխանում է թեմային: Այն է՝ սովորողների Էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման տեսական, մեթոդական և գիտագործնական հիմունքների և դրանց իրականացմանն ուղղված մանկավարժական մոդելի մշակումը: Խնդիրները հաջորդաբար բացահայտում են նպատակի իրագործման տրամաբանական հաջորդականությունը:

Իր գիտական աշխատանքում ատենախոսն ճշգրտել է «Էկոլոգիական աշխարհայացք» հասկացությունը, առաջարկել է սովորողների Էկոլոգիական

աշխարհայացքի ձևավորմանն ուղղված հայեցակարգ, ռազմավարություն, մանկավարժական պայմաններ, մանկավարժական մոդել, ինչպես նաև մշակել է «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի՝ որպես առանձին առարկայի, ծրագիրը: Նշվածով է պայմանավորված Սաթենիկ Միսակյանի ստենախոսության գիտական նորույթը:

Ատենախոսի «Էկոլոգիական աշխարհայացք» հիմնահարցի էության վերաբերյալ առաջադրված հայեցակարգային հիմնադրույթների վերլուծությունը, ավագ դպրոցի սովորողների համար նախատեսված «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ» դասընթացի առանցքային գաղափարների ձևավորումը, էկոլոգիական դաստիարակության հիմնական բաղադրատարրերի վերհանումը հաստատում են ստենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսի մշակած էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված մանկավարժական մոդելը ունի նաև գործնական նշանակություն, քանի որ այն օգտակար կլինի «ԲՏՃՄ» առարկաների դասավանդման գործընթացում:

Հեղինակը սեղմագրում հստակ ներկայացրել է ստենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը: Թույլ տվեք չկրկնվել՝ նորից անդրադառնալով գլուխներում և ենթագլուխներում զետեղված բովանդակության ամփոփ շարադրմանը, այլ պարզապես նշել ստենախոսության ուժեղ կողմերը և առավել արժեքավոր ասպեկտները:

- Վերլուծվել են «Էկոլոգիական աշխարհայացք» հասկացության գիտական սահմանումները, ինչպես նաև տրվել է այդ հասկացության հեղինակային մեկնաբանումը:
- Առանձնացվել և բնութագրվել են էկոլոգիական աշխարհայացքի կառուցվածքային բաղադրատարրերը՝ ճանաչողական, արժեքային-գնահատողական, վարքային-խնայողական:
- Կարևորվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջնային դերն ու նշանակությունը սովորողների էկոլոգիական աշխարհայացքի զարգացման գործում:
- Շեշտադրվել է ավագ դպրոցների ուսումնական պլանի բաղադրիչում «Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքները» առանձին առարկա ներմուծելու անհրաժեշտությունը:
- Իրականացվել է էկոլոգիական աշխարհայացքի առանձին բաղադրատարրերի ձևավորվածության մակարդակների վերլուծությունը՝ հետազոտության սկզբում և վերջում: Վերլուծությունը հաստատել է, որ հետազոտության ընթացքում դիտվել է էկոլոգիական գիտակցության ձևավորման և զարգացման դրական շարժընթաց:

- Առաջարկվել է սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված մանկավարժական մոդել, որի բավանդակությունը, սկզբունքները, մանկավարժական պայմանները, մեթոդները, ձևերը, միջոցները, ակնկալվող վերջնարդյունքները միտված են «մարդ-բնություն» փոխադարձ կապի կարևորության և համամարդկային արժեք լինելու գաղափարի ըմբռնմանը:

Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն և արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է: Այն գրված է գիտական սլաշաճ մակարդակով:

Հետազոտության հիմնախնդրին վերաբերող գրականության, ինչպես նաև հետազոտության արդյունքների մշակումը, համակարգումը և վերլուծությունը վկայում են ատենախոսի գիտահետազոտական աշխատանք կատարելու բարձր կարողության մասին:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են ատենախոսության հիմնական դրույթներից և կատարած հետազոտության արդյունքներից: Դրանք արտացոլված են նաև ատենախոսի հրապարակումներում:

Նշվածի հետ մեկտեղ հարկ ենք համարում կատարել դիտողություններ և նշել որոշ թերություններ.

1. Ատենախոսը նշում է, որ հետազոտությանը մասնակցել են 30 ուսուցիչ և հանրակրթական դպրոցի 400 սովորող: Սակայն աշխատությունում բացակայում են հետազոտության մասնակիցների բնութագրական տվյալները: Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսությունում ներկայացված լինեին տվյալներ հետազոտության մասնակիցների վերաբերյալ (օրինակ՝ սովորողների տարիքը, դասարանը, ուսուցիչների մանկավարժական ստաժը, դասավանդվող առարկան և այլն):

2. Հետազոտությունն ընդգրկում է 132 սկզբնաղբյուր, որոնք հղումների ձևով ամբողջությամբ արտացոլված են աշխատանքում: Սակայն գրական աղբյուրներից միայն 10-ն են հրատարակվել վերջին տասը տարիների ընթացքում:

3. Ատենախոսի կողմից մշակված էկոլոգիական աշխարհայացքի ձևավորմանն ուղղված մանկավարժական մոդելը ներկայացված է միայն ատենախոսության տեքստում (երկրորդ գլխի առաջին ենթագլխում, էջ 57): Մեղմագրում այն բացակայում է, մինչդեռ վերջինիս բովանդակությունը կշահեր, եթե մոդելը առկա լիներ նաև սեղմագրում:

4. Ատենախոսությունում նշված չէ, թե որերո՞ղ դասարանում է առավել նպատակահարմար դասավանդել «Էկոլոգիայի և բնապահպանման հիմունքներ» դասընթացը:

5. Եզրակացությունների 3-րդ կետում կարդում ենք. «Մեր տեսական հետազոտությունները ..... հիմք են տալիս շեշտադրելու հանրակրթական բնագավառում, մասնավորապես, ավագ դպրոցի տարբերակված և ընդհանուր

